

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ
(«Ազդարարի» 200-ամյակի առթիվ)

Մ. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

«Ազդարարի» առաջին համարի առաջնորդող հոդվածում («Առաջաբանություն») նրա հրատարակիչ և խմբագիր Հարություն Շամվոնյանը գրել է, որ իրեն որպես օրինակ է ծառայել Մադրասում լույս տեսնող անգլերեն լրագիրը¹։ Մինչև օրս ճշտված չէր, թե ինչ պարբերական է նկատի ունեցել Շամվոնյանը։ Մենք պարզեցինք, որ խոսքը վերաբերում է Մադրասում հրատարակվող «Հնդկական մեկնաբան» (The Indian Observer, 1793—94 թթ.) շաբաթաթերթին, որը տպագրվել է 1793 թ. սեպտեմբերի 9-ից և մեկ տարի անց, 53-րդ համարից հետո, խմբագրի մահվան պատճառով տպագրությունը դադարեցվել է։ Անգլիական մամուլի մատենագիտություններում այդ ժամանակահատվածի մադրասյան մեկ այլ պարբերական չի նշված։

Շամվոնյանը գրել է. «Բարեկարգ անգլիացիք քաղաքիս մի ամսով յառաջ քան զայս սկսեցին տպագրել տետրակ մի՝ ի վախճանի ամսույ իբրև զմերս... Առնելով զայս տետրակ ինձ օրինակ՝ և ես առաջագրեցի այսպես...»։ «Մի ամսով յառաջ» արտահայտությունը չէր կարող զարմանք չհարուցել։ Հնարավոր է արդյոք, որ Մադրասի հայկական եկեղեցու քահանա Շամվոնյանը, որը 1784 թ. ապրում էր այդ քաղաքում, տեղյակ չլիներ այնպիսի մի երևույթի, ինչպիսին տեղի անգլիական շաբաթաթերթի հրատարակությունն էր, և չիմանար, որ այն արդեն մեկ տարի է ինչ լույս է տեսնում։ Դրա անհավանականությունը մի մտավորականի համար, որը տեղի հայ գաղութի հասարակական և մշակութային կյանքի գործուն մասնակիցն էր, ակնհայտ է։ Չենք կարող դա բացատրել նաև «տարի» բառի գրաբարյան ձևի սխալ կիրառումով, որ «ամոք մի յառաջ» կամ «ամամ միով յառաջ»-ի փոխարեն գրել է «մի ամսով յառաջ»։

Հավանական է, որ Շամվոնյանը ցանկացել է ասել, որ նա իրեն օրինակ է վերցրել տեղի այն անգլերեն թերթը, որը լույս էր տեսել ամսվա սկզբին և որի նմանը ինքը սկսում է հրատարակել ամսվա վերջից։ Շփոթեցնողը «սկսեցին տպագրել» արտահայտությունն է, ինչը հիմք է տվել հետագայում ենթադրելու (սկսած Մեսրոպ Սեթից), թե անգլերեն պարբերականը սկսել է հրատարակվել ընդամենը մեկ ամիս առաջ։ Այլ կերպ բացատրել այս թյուրիմացությունը, քան լեզվական աղավաղումով, չի կարելի։

Գիտենք, որ «Ազդարարի» լեզուն քայքայվող գրաբարն էր, որի վրա ակնհայտ է բարբառների (հիմնականում Զուղայի) և նոր ձևավորվող աշխարհաբարի ազդեցությունը։ Այդ պատճառով, ինչպես քանիցս նշվել է, ամսագրի լեզուն անկանոն է։ Նրանում բազմաթիվ են շարահյուսական և ուղղագրական սխալները, որոնք հաճախ աղավաղել են տեքստի իմաստը։ Ակներև է, որ անգլերեն շաբաթաթերթը, որը լույս տեսած լինելը ընդամենը մեկ ամիս առաջ, չէր կարող այդքան արագ կյանքի կոչել հայերեն նմանօրինակը, կամ էլ ոգեշնչել տեղի հայ գործիչներին այդքան արագ իրականացնել առաջին հայ պարբերականի հիմնադրումը։ Դրա համար ժամանակ էր հարկավոր։ Պարզվեց նաև, որ «Հնդկական մեկնաբան» Մադրասում լույս տեսած միակ անգ-

¹ Տե՛ս «Ազդարար», Մադրաս, 1794, № 1, էջ 4 (մեջբերումները արվում են 1976 թ. երկ-հատորյա լուսապատճենավորումից, Կալկաթա—Լոնդոն, Կուլպենկյան ֆոնդ)։

յերեն պարբերականը չէր: 1790—92 թթ. այնտեղ հրատարակվել է «Մադրասյան լրատու» («The Madras Courier») լրատվական բնույթի թերթը: Սակայն մադրասահայ գործիչների լուսավորական նպատակներին ավելի համապատասխանել է «Հնդկական մեկնաբանը»: Նրանում, ասում է Շմավոնյանը, տպագրվել են անգլիական ազգի նշանավոր մարդկանց կենսագրությունները, պատմվածքներ, զանազան հեղինակների ուշագրավ գործեր, իսկ «տետրակի» վերջում գետեղվել են տեղեկություններ շուկայական գների մասին, նավերի չվացուցակներ, զանազան հայտարարություններ: Այս նկարագրությունից նույնպես պարզ է դառնում, որ Շմավոնյանը նկատի է ունեցել անգլերեն շաբաթաթերթի շատ համարները:

Այնուհետև նա պարզաբանում է, թե ինչպիսին պետք է լինի իր ամսագիրը: Նրանում կարևոր տեղ է գրավելու բարոյախոսությունը (անախ տպագրել յայսմ գիտատական բանք ինչ): Այս նպատակով կտպագրվեն ինչպես թարգմանական գործեր («թարգմանեալք յայլոց ազգաց»), ինչում, դրում է Շմավոնյանը, իրեն խոստացել են օգնել նրա երիտասարդ աշխատակիցները (Քուրախակից իմ երիտասարդք գտեղոյս խոստացան օգնել ինձ), այնպես էլ սեփական հայկական գործեր («հատորք ինչ հանեալ ի գրեան մերոց»): Զուգահեռաբար նա պետք է ծավալեր լուսավորական, կրթական գործունեություն:

Ապահովել ամսագիրը նպատակամղված բարոյախոսությամբ հագեցած գեղարվեստական գործերով, քիտոնթյան ասպարեզի նորություններ հաղորդող և նորագույն առաջադիմական գաղափարներ քարոզող նյութերով՝ այնքան էլ հեշտ գործ չէր: Խմբագիրը զգուշացնում էր ընթերցողներին, որ «տետրակում» նրանք չեն գտնի փիլիսոփայական գործեր, որ ինքը և իր գործընկերները անփորձ են «քերթության արվեստում» և խնդրում էր ուղարկել բանաստեղծություններ, գեղարվեստական գործեր և այնպիսի նյութեր, որոնք հաճելի և օգտակար լինեն ընթերցողներին և ինչպիսիք նա խոստանում էր տպագրել «առ ի պարծանս շարադրողաց և երջանկություն ազգին մերոյ»:

Այնուհետև նա ծրագրում էր ամսագրում գետեղել նորություններ և հաղորդումներ ինչպես տեղական, այնպես էլ արտաքին աշխարհի իրադարձություններին վերաբերյալ («ջանայ առ ձեռս անիլ զլուրս ինչ ի տանն Հայոց, Պարսից և ի զանազան տեղաց»):

Ամսագրում պետք է տեղ գտնեին նաև տեղեկություններ այն շուկաների մասին, որոնց հետ առևտրական կապերով կապված էր հնդկահայ վաճառականությունը՝ ապրանքների գներ, նավերի չվացուցակներ և այլն, ինչպես նաև սրբերի տոներ, լուսնի փուլերի և այլ տոների օրացույցներ և գաղթօջախի ընթացիկ կյանքի իրադարձություններին վերաբերող հայտարարություններ:

Իր բովանդակությամբ «Ազգարարը», իհարկե, չմնաց այս ծրագրի շրջանակներում: Նրա նյութերը բացահայտում են այն տարբերությունը, որ կարանգլիական շաբաթաթերթի և հայկական ամսագրի միջև: XVIII դարի անգլիական մամուլի նպատակն էր լուսավորելու, հասարակական արատները ծաղրելու, բարոյական քարոզի միջոցով կատարելագործել առկա անգլիական իրավակարգը: Հնդկահայ լրագրողների առջև ծառանում էին այլ վերջնական նպատակներ՝ լուսավորելու, դարի առաջավոր սոցիալ-քաղաքական գաղափարներին հաղորդակցելու, բարոյապես կատարելագործելու միջոցով նպաստել ազգային ինքնագիտակցության զարթոնքին, հայերին ազատագրական պայքարի ներգրավելուն: «Ազգարարի» համար ծվրոպայում և այլուր տեղի ունեցող հասարակական, քաղաքական իրադարձությունների մասին տեղեկությունների աղբյուր են ծառայել մեծ մասամբ Հնդկաստանում լույս տեսնող անգլիական լրագրերը: Որպես կանոն, սակայն, լուրերի ստույգ աղբյուրները չեն մատնանշվել: Սովորաբար բավառարվել են ընդհանուր բնույթի վկայակոչումներով՝ «Անգլիական թերթերից», «Արտատպեցինք բոմբեյան լրագրերից», «Կալկաթայի լրագրից իմացանք», «Ծաղկաքաղ կալկաթյան, բոմբեյան, մադրասյան լրագրերից», «Ջանադան լուրեր տպագրված Կալկաթայում և արտատպված

առանց կետ մի փոփոխություն²։ Որոշ հաղորդագրություններ ուղեկցվել են ամսագրի թղթակցի պարզաբանումներով՝ «Մաղկաքաղ լուրք կաղեթաց, հանդերձ նախերգանք ի թարգմանչի սոյն լրոյս առ ընթերցողս»³։ Երբեմն եվրոպական իրադարձությունների մեկնաբանությունների հակասական բնույթը մամուլում դժվարացրել է կողմնորոշվելը։ «Ի՞նչ եւ յամենայն այս հրատարակեցաւ զանագան լուրք Յերօպիայ, սակայն այնքան կերպ զկերպ իոսին, մինչ զի ապշիմք, թէ զորն արդեոք ձեռն արկցուք ընծայել զԱզգարարոջս...»⁴։ Որ հաղորդագրությունների աղբյուր ծառայել են հիմնականում անգլիական լրագրները, վկայում է շատ բառերի անգլիական գրելաձևը՝ «Ջանուար» (հունվար), «Ջուն» (հունիս), «ջնրալ» (պենթրալ), «քոլունել» (գնդապետ), «էրօպեան» (եվրոպական), «կոմպանի» (ընկերություն), «Պոլունիա» (Լեհաստան) և այլն։ Ընդհանուր տոմամբ ամսագրում դեռ չկա օտար բառերի կալուն ուղղապրություն։ Որինակ, «Ֆրանսիացիներ»՝ գրվում է «գալլիացիք», «Ֆրանկսիզներ» և այլն։ «Ֆրանսիացի»՝ գրվում է «ֆրանսու», «Ֆրանսիո», «Ֆրանցիո» և այլն։

Այսպիսով, XVIII դարում եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների, ինչպես նաև նորագույն մոտեցումների հայկական միջավայր թափանցելու ուղիներից մեկը եղան Հնդկաստանում լույս տեսնող անգլիական պարբերականները։

Այստեղ առաջին անգլերեն լրագրերը սկսել են լույս տեսնել 1780-ական թթ. Կալկաթայում։ Դրանք էին՝ «Բենգալյան լրագիրը» (*The Calcutta Gazette*, 1780) -- ², որի խմբագիրն էր հայտնի ընդդիմադիր Ուիլյամ Հիքին, «Հնդկական լրագր. ը» (*The Indian Gazette*, 1782 -- 5) և «Ասիական-կալկաթյան» «Կալկաթյան լրագիրը» (*The Calcutta Gazette*, 1784 -- 1823)։

Հնդկաստանի այս վաղագույն պարբերականներին ծանոթանալը, ինչ խոսք, մեզ լրացուցիչ տեղեկություններ կտար հայ գաղթօջախի մշակութային միջավայրի մասին։ Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել դրանց օրինակները։ Մի բան պարզ է, որ այդ մամուլը դադարաբաշխ կապված էր լուսավորության դարի լրագրության ավանդույթների հետ։

Պարզ է նաև, որ անկախության համար պատերազմը Ամերիկայում, սահմանադրական վեճերը և պառլամենտական բարեփոխումների համար մղվող պայքարը Անգլիայում, Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, ինչպես նաև ազատագրական շարժումները բուն Հնդկաստանում և այլուր, անհետեվանք շանցան այդ պարբերականների նախաձեռնողների համար։ Նրանցից ոմանք համարձակորեն ընդդիմադիր դիրք էին գրավում սեփական կառավարության, ինչպես նաև Հնդկաստանի անգլիական վարչակարգի հանդեպ, ինչը ի վերջո հանգեցրեց խիստ գրաքննության սահմանմանը։ «Հնդկաստանում մամուլի ազատության առաջամարտիկներից էին, անգլիացիները», գրել է Ջ. Ներուն⁵։ Նրա նշած Միլթ Բաքինդեմից բացի, որը արտաքսվել է Հնդկաստանից, հիշատակության արժանի են Ուիլյամ Հիքին⁶ Կալկաթայում և Հյու Բոյդը⁷ Մադրասում։

Հիքին ուշադրություն գրավեց Բենգալի նահանգապետ Ու. Հաստինգսի դեմ ուղղված իր համարձակ ելույթներով, որի համար «Թունոտ Հիքին» անվանվեց։ Նրա լրագրի հրատարակությունը դադարեցվել է, Հիքին բանտարկ-

² Վերջինը տե՛ս «Ազգարար», 1795, № 8, էջ 204։

³ Նույն տեղում, № 6, էջ 94։

⁴ Նույն տեղում, № 14, էջ 548։

⁵ Д. Ж. Неру. Открытие Индии. М., 1955, с. 333.

⁶ Hickey William (1745—1808).

⁷ Boyd Hugh (1746—1794): Տե՛ս G. E. Buckland. Dictionary of Indian Biography. London, 1906.

վել: Հյուսիսային Հնդկաստան գալով սկզբում ծառայել է որպես Մադրասի նահանգապետ լորդ Մաքարտնիի քարտուղարը: Հետագայում դիվանագիտական հանձնարարությամբ մեկնել է Յեյլոն: Վերադառնալուց հետո, 1790 թ. ձեռնարկել է Մադրասի առաջին անգլիական լրագրի հրատարակությունը:

Բոյդի քաղաքական հայացքների ուղղվածության յուրօրինակ բնութագիր կարող է ծառայել այն փաստը, որ նրա անունը հիշատակվել է Անգլիայում մեծ աղմուկ հանած «Ջոնիոսի նամակների» ենթագրյալ հեղինակների ցանկում: Այդ նամակները որոշ ընդհատումներով տպագրվել են «Հասարակական լրատու» («Public Advertiser») ընդդիմադիր լրագրում 1769—72 թթ.: Դրանք XVIII դարի վերջի անգլիական բուրժուական ռադիկալիզմի ամենափայլուն նմուշներն են: Նրանցում արտացոլվել են 60-ական թթ. բռնկված սահմանադրական վեճերը: Հեղինակը «Ջոնիոս» (կրտսեր) անվան տակ քննադատում էր պառլամենտական ընտրությունների կարգը, միևնույնիստների և պառլամենտի անդամների ծախսը լինելը, պահանջում էր ընտրական իրավունքի ընդլայնում, մամուլի ազատություն և այլն:

Կառավարության ինքնակամ և ապօրինի գործողությունների իր համարձակ մերկացումներով «Ջոնիոսը» առաջին իսկ ելույթից համընդհանուր ուշադրություն դրավեց: Նրա համարձակությունը իր գազաթնակետին հասավ, երբ նա դրեց թագավորի դեմ ուղղված իր նամակը: Այդ պահից բոլորը տեսնում էին իմանալ հեղինակի ով լինելը: Ընթացողություններ էին արվում տարբեր նշանավոր մարդկանց վերաբերյալ: Այդ թվում հիշատակվել են՝ էդ. Բերքը, էդ. Գիրդնը, կոմս Չեստերֆիլդը, կոմս Տեմսլը, դուքս Պորտլենդը, Հորնթուկը, Ֆ. Ֆրենսիսը, Հ. Բոյդը և ուրիշներ:

Քանի որ հեղինակին բացահայտել չհաջողվեց, Գեորգ III-ի հրամանով պատասխանատվության կանչվեց հրատարակիչը: Սակայն դատավարությունը միայն կրկնապատկեց «Ջոնիոսի» համբավը: Մինչև 1955 թ. 293 հոդվածներ և ուսումնասիրություններ են գրվել «Ջոնիոսի» մասին: 1772 թ. մինչև 1812 թ. նրա նամակները 47 անգամ վերահրատարակվել են: Միայն XIX դարի սկզբին ի հայտ եկան ծանրակշիռ փաստաթղթեր այն մասին, որ նամակների հեղինակը Ֆիլիպ Ֆրենսիսն է: 1773 թ. նա մեկնել է Հնդկաստան որպես Արևելահնդկական ընկերության բարձրագույն խորհրդի անդամ: Այստեղ նա ընդդիմադիր դիրք է գրավել նահանգապետ Ուորենի Հաստինգսի հանդեպ: Նրանց հակամարտությունը նույնիսկ մեծամարտի է հանգեցրել: 1780 թ. Ֆրենսիսը վերադարձել է Անգլիա: Երբ 1790-ական թթ. Լոնդոնում դատական գործ հարուցվեց Հաստինգսի դեմ, Ֆրենսիսը օգնել է էդ. Բերքին մեղադրական նյութեր ներկայացնելու գործում:

Ի դեպ, Բոյդին են վերագրվել նաև նույն լրագրում 1772 թ. տպագրված «Դեմոկրատիկոսի» նամակները: Այս շարքի հրապարակումից հետո Բոյդը թողել է Անգլիան և հայտնվել Մադրասում: Փախուստ չէ՞ր արդյոք դա, հնարավոր հետապնդումից խույս տալու համար: Պատահական չէ նաև այն, որ Հնդկաստանում Բոյդը ծառայել է հենց Մաքարտնիի մոտ: Վերջինս փայլուն կրթություն ստացած մեկն էր, թատրոնի, պոեզիայի երկրպագու: Ֆրանսիայում եղած ժամանակ նա բարեկամական կապեր է հաստատել Վոլտերի և Ստեյնի հետ: Անգլիայում նա մոտ էր Ս. Ջոնսոնի խմբին: Վոլտերը, Չ. Ֆոքսը, էդ. Բերքը, Ջ. Իեյնսլոուսը և այլք նրան բնութագրել են որպես սրամիտ և հմայիչ մարդու, նշել են նրա գրական ձիրքը⁸:

1765—67 թթ. Մաքարտնիս Անգլիայի արտակարգ դեսպանն էր Ռուսաստանում: Վերադառնալով Անգլիա ընտրվել է պառլամենտի անդամ: 1780 թ. Մաքարտնիս ստանձնել է Մադրասի նահանգապետի պաշտոնը: Իր դիվանա-

⁸ Տե՛ս Մ. Պ. Ա. Алексеев. Русско-английские литературные связи.—Литературное наследство, т. 91, М., 1982. Մաքարտնիս թողել է մի շարք գրվածքներ այն երկրների մասին, ուր նա ծառայել է (Ռուսաստան, Իռլանդիա, Չինաստան):

դիտական և պետական ծառայության մեջ Մաքարտին միշտ ձգտել է ինքնուրույն որոշումներով Այսպիսի սլարագաններում ի հայտ է եկել նրա ներքին կապը անդիական ռադիկալների հետ։ Այսպես, անգլո-մայսուրական պատերազմի ժամանակ Մաքարտին ձգտել է հաշտության եզրեր գտնել Մայսուրի առաջնորդ Հեյդար Ալի խանի հետ, որը գլխավորեց հակազաղութարարական պատերազմը Հնդկաստանում։ Սակայն նրա քաղաքականությանը դեմ գնաց անդիական ղորերի հրամանատար էյր Քուտու։ Ավելի ուշ Մաքարտին բախակցություններ սկսեց Հեյդար Ալիի որդու՝ Բիպու Սուլթանի հետ։ Այս անդամ էլ Ռենգալի նահանգապետ Ու. Հաստինգսը և Բարձրագույն Խորհուրդը արգելեցին նրան շարունակել բանակցությունները։ Մաքարտին հրաժարական տվեց և 1786 թ. վերադարձավ Անգլիա։

Մաքարտին անշուշտ ի պաշտոնե հաղորդակցվել է մադրասահայերի հետ, իսկ Բոյդը իբրև քարտուղար չէր կարող անմասն մնալ այդ հանդիպումներից։ Հայտնի է, որ ավելի ուշ Մաքարտին Կալկաթայում ծանոթացել է Հոփսինգի էմինի հետ⁹, Թերևս նրա նահանգապետության տարիներին են ստեղծվում այն առավել նպաստավոր պայմանները, որոնք հնարավորություն տվեցին տեղի հայ հայրենասերներին ծավալել իրենց լուսավորական, հրապարակախոսական գործունեությունը։ Այն սկիզբ էր առել արդեն 1770-ական թթ., երբ Մովսես Բաղրամյանը հրատարակեց «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» (1772 թ.) հրապարակախոսական երկը, որով հայ իրականության մեջ առաջին անգամ քարոզեց այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ժողովրդավարությունը և սահմանադրությունը։ «Հնդկական աշխարհի ամենեն կանուխ և վրոպականացած և անդիական ոգիին դրոշմով խորագույն տպավորված մարգն է այս, ուր ծաղկում է ապրել ամենաուժեղ և արժանավոր հայ գաղութը», — գրել է Ա. Ալպոյաճյանը¹⁰։

«Ջուներիուսին» Բոյդի հետ նույնացնելը ոչ միայն վերջինիս յուրօրինակ բնութագիրն է, այլև նրա մադրասյան շաքաթաթերթի գաղափարական ուղղրվածությունը նկարագիրը։ Այն կարգացվել է Մադրասի հայ մտավորականների կողմից և միտք է առաջացրել նման պարբերական հիմնելու մասին¹¹։ Չի բացառվում, որ այդ գաղափարը Բոյդի հետ նաև քննարկվել է։ Այն տարիներին ոչ մեծ այդ քաղաքում նման շփումները բնական էին։ Լեոն ենթադրում է, որ Մադրասի քաղաքական ընտանիքում եղել է եվրոպացի խորհրդատու և գործակից¹²։ Անհավանական չէ, որ դա կարող էր լինել և Բոյդը։

«Ազդարարի» առաջին համարներում Ջոզեֆ Ադիսոնի «Միրզայի տեսիլքը»¹³ և Ռիչարդ Ստիլի «Սանտոն Բարսիսայի պատմությունը»¹⁴ «արևելյան պատմվածքների» տպագրությունը վկայում է, որ հայ լրագրողները ընթացիկ անգլիական պարբերականներին առնչվելուց բացի, ծանոթ էին անգլիական լուսավորական մամուլի ռազմիրանների ստեղծագործությանը¹⁵։ Ստիլի և Ադիսոնի պատմական երախտիքն այն է, որ նրանք լուսավորական մամուլի սկզբնավորողները հանդիսացան Եվրոպայում։ Նրանց բարոյախոսա-

⁹ The Life and Adventures of Joseph Fmin. London, 1792, p. 196.

¹⁰ Արշակ Ալպոյաճյան. Պատմություն հայ գաղթականության. հ. 9, Գահրե, 1961, էջ 196։

¹¹ Լեոն գրում է. Պարբերական հրատարակության գաղափարը ինքնուրույնության հասկանալի է, փոխառված էր անգլիացիներից» (Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1996, էջ 568)։

¹² Լ. և Ռ. Երկերի ժողովածու. հ. 3, Երևան, 1946, էջ 535։

¹³ Տեսիլ Միրզային նշանակիչ բնութեան մտրդկային կենաց. — «Ազդարար», 1794, № 1, էջ 7—10։

¹⁴ Պատմություն Սանտոն Բարսիսային նշանակիչ բնութեան մարդոցն լինելն օժանդակ առ չարն. — «Ազդարար», 1794, № 2, էջ 65—68։

¹⁵ Տես Մ. Մ. Ասլանյան. Անգլիացի հեղինակներ Ջ. Ադիսոնի և Ռ. Ստիլի պատմվածքները «Ազդարարում».— «Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, էջ 160—168։

կան-երգիծական պարբերականները՝ «Շատախոս» («The Tattler», 1709—1711), «Հանդիսատես» («The Spectator», 1711—1712, 1714), «Խնամակալ» («The Guardian», 1713), «Անգլիացի» («The Englishman», 1713, 14) ծառայեցին դարի լուսավորական, բարոյաէթիկական իդեալների իրականացման նպատակներին:

Այդ պարբերականները կարևոր դեր խաղացին եվրոպական մամուլի պատմության մեջ: Ադիսոնը և Ստիլը իրենց հետևորդներն ունեցան մի շարք երկրներում՝ Բրեյտինդերը՝ Շվեյցարիայում (1721 թ.), Գոտշեդը՝ Գերմանիայում (1725—27 թթ.), Պրեվոտը՝ Ֆրանսիայում, որի «Թեր և դեմ» (1733—40) ֆրանսերեն պարբերականը լույս էր տեսնում Անգլիայում և հսկայական հաջողություն ունեցավ Ֆրանսիայում: Նրանք, իհարկե, սոսկ ընդօրինակողներ չէին, այլ իրենց երկրների նոր բնույթի լրագրության սկզբնավորողները: Հենվելդով անգլիացիների փորձի վրա, նրանք ջանում էին լուծել սեփական ազգային խնդիրներ:

Ավելի ուշ, Ռուսաստանում Ն. Նովիկովը, հիմնելով իր նմանատիպ «Պորտաբուլ» («Трутенъ», 1769), «Դատարկախոս» («Пустомеля», 1770) հանդեսները, հավատում էր, որ գիտելիքներ տարածելով, լուսավորելով, բարոյապես կատարելագործելով ժամանակակիցներին և հասարակական արատները ծաղրելով կարելի է վերացնել ոչ բանական սոցիալական կարգի թերությունները:

Նշանավոր գրող, առակագիր Ի. Կռիլովը «Ոգիների փոստը» («Почта духов», 1789)՝ «Հանդիսատես» («Зритель», 1792) պարբերականներով շարունակեց Նովիկովի գործը՝ էլ ավել սրությամբ ձաղկելով ռուսական կյանքի արատները:

Հնդհանուր առմամբ XVIII դարի ռուս առաջադեմ գործիչների համար ավելի բնորոշ էր կողմնորոշումը դեպի ֆրանսիական լուսավորիչների գաղափարախոսությունը, որը նպատակամղված էր խարխել բացարձակ միապետական կարգի հիմքերը: Սակայն մամուլի հարցում նրանք ևս հետևեցին անգլիացիների օրինակին, քանի որ սահմանադրական միապետության կարգն այստեղ ավելի նպաստավոր էր մամուլի ազատության համար¹⁸: 1750—60-ական թթ. Ս. Զոնսոնի «Նորաթափանց», «Արկածախնդիր», «Անբան», Օ. Գոլդսմիթի «Մեղու» ամսագրերում երգիծանքը ավելի սուր բնույթ ստացավ: Հեռավոր հնդկահայ գաղութում պարբերականի հիմնումը այն իրողության վկայությունն է, որ հայ առաջադեմ գործիչները համաքայլ են ընթացել լուսավորության դարի մտավոր շարժմանը: Որոշ հապաղումը միանգամայն բնական էր, քանի որ առնչվել անգլիական մամուլին նրանք կարողացան միայն դարավերջին՝ Հնդկաստանում: Այդ ժամանակ նկատելի աճել էր Մադրասի հայերի թիվը, կայունացել գաղթօջախի կյանքը, հիմնվել էին տպարաններ, բացվել դպրոցներ: Նթե եվրոպական առաջավոր երկրներում լուսավորական շարժումը և լրագրության գործն առաջընթաց է ապրել և ծավալվել է գաղափարական սերտ կապերի, տարբեր ժողովուրդների մշակույթների փոխներգործության, գեղարվեստական դրականության փորձի յուրացման ուղիով, ապա այդպիսի առնչություններն էլ ավելի անհրաժեշտություն էին հեռավոր Հնդկաստանի հայ մտավորականության համար: Միայն XVIII դարի եվրոպական առաջավոր մտքի նվաճումներին, լուսավորության գաղափարախոսությանը, մամուլին հաղորդակցվելու միջոցով է, որ հնդկահայ գաղութի դործիչները՝ Զ. Էմինը, Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանը, Զ. Շմավոնյանը և այլք, կարողացան բարձրանալ սեփական ազգային խնդիրները նորովի քննարկելու աստիճանին և ազգի ազատագրության իրենց ծրագրով ուրույն տեղ գրավել ժամանակի ազատագրական շարժումների պատմության մեջ:

¹⁸ Ֆրանսիացի լուսավորիչներ Մոնտեսքյուն և Վոլտերը այդ կարգի ջերմեռանդ երկրպագուներն էին և երազում էին այդպիսին հաստատել Ֆրանսիայում:

XVIII դարի 80-ական թթ. հայ գործիչները Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրության հույսերը կապում էին արդեն ոչ թե Արևմուտքի, այլ միմիայն Ռուսաստանի հետ: Սակայն դեմոկրատական, ազատասիրական հայացքների սնուցման աղբյուր նրանց համար դեռ մնում էր Արևմուտքը և հիմնականում Անգլիան, քանի որ նրանք շփման մեջ էին առավելապես այդ երկրի ներկայացուցիչների հետ, և քանի որ զանգվածաբար սկսել էին տիրապետել անգլերեն լեզվին, կարող էին օգտվել հիմնականում անգլիական մամուլից և դրականությունից: Բայց և նույն ժամանակ, անգլիական տիրակալությունը Հնդկաստանում հանգեցրեց հնդկահայ գաղութի տնտեսական քայքայմանը: Ձ. Ներուն այսպես է բնութագրել Անգլիայի երկակի դերն այդ երկրում: Մի կողմից «Առանձին անգլիացիներ՝ մանկավարժներ, արևելագետներ, լրագրողներ, միսիոներներ և այլն, կարևոր դեր են կատարել արևմտյան կուլտուրան Հնդկաստան ներմուծելու հարցում»¹⁷: Նրանք, ասում է Ներուն, այդ իրականացնելու իրենց փորձերում հաճախ հակադրվել են սեփական կառավարությանը: Կառավարությունը խուսափում էր ժամանակակից կրթություն տարածել Հնդկաստանում և դրա ճանապարհին բաղամթիվ խոչընդոտներ էր հարուցում: Այնուհանդերձ, անգլիական գաղափարները, գրականությունը և քաղաքական ավանդույթները ներթափանցել են Հնդկաստան շնորհիվ որոշ ընդունակ և եռանդուն անգլիացիների¹⁸: Ներուն առանձնապես ընդգծել է արևելագետ Ուիլյամ Ջոնսի երախտիքը: «Հնդկաստանը հավիտյանս պարտական է Ջոնսին և այլ եվրոպացի գիտունների, որոնք նորից հայտնագործեցին նրա անցյալ գրականությունը»¹⁹:

Սակայն հատկապես իր արտաքին քաղաքականության մեջ անգլիական կառավարությունը ելնում էր երկրի առևտրաարդյունաբերական կապիտալի շահերից, իսկ այդ շահերը պահանջում էին Հնդկաստանում կասեցնել վերափոխությունները, քանի որ դրանք կարող էին ուժեղացնել հնդիկ ժողովրդին, և այսպիսով, ի վերջո թուլացնել անգլիական տիրապետությունը Հնդկաստանում²⁰:

Ներուն նշում էր. մի կողմից Անգլիան աշխարհի ամենաառաջադեմ պետությունն էր իր սահմանադրական միապետության կարգով, ղորեղ պառլամենտով ու խոշոր մեքենայացված արդյունաբերությամբ և ներկայացնում էր «նոր պատմական ուժ, որը նպատակ ուներ վերափոխել աշխարհն ու այսպիսով հանդիսանում էր փոփոխությունների և հեղափոխության ավանգարդն ու ներկայացուցիչը, և մյուս կողմից Անգլիան գիտակցաբար փորձում էր խոչընդոտել փոփոխություններին»²¹:

Ըստ Ներունի, տնդիացիք երկար ժամանակ թույլ չեն տվել բնիկներին համար անգլիական դպրոցներ բացել Հնդկաստանում: Հնդիկների կողմից հրատարակված առաջին լրագիրը բենգալի լեզվով լույս է տեսել միայն 1818 թ.:

Հայերի նկատմամբ մտավոր առաջընթացը կասեցնելու այդ նույն քաղաքականությունը չի տարվել: Հայերն այստեղ փոքրամթիվ եկվորներ էին²²: Անգլիացիների կողմից նրանք ընկալվել են որպես այլ էթնիկական տիպ, այլ քաղաքակրթության կրողներ, որոնք այստեղ ժամանակավոր էին և որոնց ապագան կապված էր նրանց հեռավոր բնօրրանի հետ²³: Անգլիացիները չեն խոչընդոտել հայ գաղթաբանի մշակութային միջոցառումներին: Նրանց հա-

17 Д. Ж. Неру. Открытие Индии. М., 1989, с. 53.

18 Նույն տեղում, էջ 47:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում, էջ 47—48:

21 Նույն տեղում:

22 Ինչպես նշել են Լեոն և այլ պատմաբաններ, XVIII դարում հայերի թիվը Հնդկաստանում չի անցել 18—20 հազարից:

23 Այս առնչությամբ տե՛ս Մ. Մ. Ասլանյան. Հնդկի էմիգրե և անգլիացի արևելագետ Ուիլյամ Ջոնսը. — «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4, էջ 73—81:

մար կարևորը հայ վաճառականությունը ասպարեզից հանելն էր, որը զգալի ուժ էր ներկայացնում:

Սկզբում անգլիացի օգտագործեցին այդ ուժը Հնդկաստանում հիմնավորվելու համար: Ալպոյաճյանը գրել է. «...ճարտար անգլիացիք հասկացան, թե հայերը որքան կրնային օգտակար ըլլալ իրենց և զանոնք սիրահաշիվ ուզեցին, սկիզբները տվին իրավունքներ, բացառիկ արտոնություններ, դարձուցին զանոնք համահավասար իրավատեր և նույնիսկ չդրին հայոց և անգլիացիի միջև խտիր»²⁴:

Իրենց դիրքերը ամրապնդելուց հետո անգլիացիները աստիճանաբար ասպարեզից դուրս վանեցին հայ վաճառականությունը: Հայերը իրենց թիկունքում չունեին զարգացած արդյունաբերությամբ պետություն, հզոր նավատորմ, բանակ: Տնտեսական և քաղաքական այդ անպաշտպանվածությունն էր, որ ստիպում էր սեփական պետություն ունենալու գաղափարը առաջնահերթ դարձնել:

Այսպիսով, օտար ափերում տնտեսական բարգավաճման և գոյատևության անհեռանկարության գիտակցումը, ինչպես նաև լուսավորության դարի առաջադիմական ձգտումներին հաղորդակցվելը Հնդկաստանում, նպաստավոր եղան հայ ազատագրական գաղափարախոսության ձևավորման, հրապարակախոսության զարթոնքի և պարբերական մամուլի հիմնադրության համար:

ПЕРВЕНЕЦ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

(К 200-летию «Аздара»)

М. М. АСЛАНЯН

Резюме

В программной статье первого номера «Аздара» («Вестник») — первенца армянской периодической печати, его издатель и редактор Арутюн Шмавонян писал, что за образец взял издаваемую в Мадрасе английскую «Тетрадь» (не указав, однако, ее названия). Выяснилось, что речь шла об «Индийском обозревателе» («The Indian Observer», Madras, IX. 1793—X. 1794), издателем которого был известный в Англии радикал Хью Бойд (Hugh Boyd, 1746—1794). Его имя вошло в список предполагаемых авторов напугавших «Писем Юниуса», анонимно печатавшихся в 1769—79 гг. в оппозиционной газете «Общественный уведомитель» («Public Advertiser»). Позднее ему приписывались и «Письма Демократикуса», после чего он покинул Англию и уехал в Индию, где служил секретарем генерал-губернатора Мадраса — лорда Маккартни. Из передовицы А. Шмавоняна явствует, что он ставил перед собой те же нравоучительные, образцательные, просветительские цели, что и периодика века Просвещения. Не случайно, что в первых же номерах «Аздара» были напечатаны повести зачинателей этой периодики Дж. Аддисона и Р. Стиля, опыты которых переняли во многих европейских странах. Однако, если на Западе совершенствованные личности должны были служить переходу от феодального строя к буржуазному, перед армянскими деятелями стояли и иные задачи: приобщить армян к новейшим общественно-политическим теориям, пробудить национальное самосознание, объединить для осуществления вековой мечты — освобождения родины от иноземных захватчиков.

²⁴ Արշակ Ալպոյաճյան. նշվ. աշխ. էջ 82: